

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1990 Թ.
ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՅԵՏՈ

Լ. Լ. ՈՒՆՈՒԲԱԲՅԱՆ

1990 թ. նոր էջ բացեց հայ-ռուսական հարաբերությունների պատմության մեջ: ԽՍՀՄ-ում տեղի ունեցող փոփոխությունները, միութենական կենտրոնի և հանրապետությունների իրավասությունների վերանայումը, Հայաստանում և Ռուսաստանում տեղի ունեցած իշխանափոխությունը նախադրյալներ էին ստեղծում հայ-ռուսական հարաբերություններին նոր որակ հաղորդելու համար:

1990 թ. գարնանը Ռուսաստանի ԽՖՍՀ-ում և Հայկական ԽՍՀ-ում խորհրդային Միության ստեղծումից ի վեր առաջին անգամ տեղի ունեցան խորհրդարանական այլընտրանքային ընտրություններ, որոնց արդյունքում հաղթանակ տարան կոմունիստական կուսակցություններին ընդդիմադիր քաղաքական ուժերը, ինչը վերջ դրեց Կոմկուսի երկարամյա մենաշնորհային իշխանությանը:

Ռուսաստանում հանրապետության բարձրագույն պաշտոնը մայիսի վերջին ստանձանեց «Ժողովրդավարական Ռուսաստան» շարժման համանախագահ Բ. Ելցինը: Նրա ընտրվելը խորհրդային ամենամեծ հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնում սուր պայքար էր նախանշում կենտրոնի և ՌԽՖՍՀ ղեկավարությունների միջև:

Հայաստանում իշխանությունն անցավ համաժողովրդական դարաբաղյան շարժման ալիքի վրա ասպարեզ եկած և «Ղարաբաղ» կոմիտեի հիմքի վրա ստեղծված Հայոց համազգային շարժում կազմակերպությանը (ՀՀԾ), որի ներկայացուցիչ Լ. Տեր-Պետրոսյանն օգոստոսի սկզբին ընտրվեց ԳԽ նախագահ: ՀՀԾ-ի նախընտրական ծրագրում նշվում էր. «... Ծրագրի նպատակն է՝ ստեղծել Հայաստանի ինքնուրույն, անկախ գոյության քաղաքական, տնտեսական, իրավական և հոգևոր նախադրյալներ...»: Դա չէր կարող հակասություններ չառաջացնել կենտրոնի հետ ունեցած հարաբերություններում:

Երկու նորընտիր խորհրդարանների ընդունած առաջին որոշումները նույն քաղաքական միտումն ունեին. հանրապետությունները ձգտում էին ինքնիշխանության և ինքնուրույնության: Այս գործընթացը բնորոշ էր նաև խորհրդային մյուս հանրապետություններին:

ՌԽՖՍՀ ժողպատգամավորների 1-ին համագումարը 1990 թ. հունիսին ընդունեց երկու կարևորագույն փաստաթուղթ՝ ՌԽՖՍՀ պետական ինքնիշխանության մասին Հռչակագիրը և ՌԽՖՍՀ տարածքում կազմակերպությունների կառավարման գործառնությունների տարանջատման մասին որոշումը¹:

Հայաստանի Գերագույն խորհուրդը նույն թվականի հուլիսին հայտարարեց, որ «խորհրդային բանակի և ներքին զորքերի ստորաբաժանումները Հայաստանի տարածքում իրավունք չունեն իրականացնելու պատժիչ որևէ գործողություն առանց ՀՍՀ ԳԽ-ի թույլտվության», իսկ օգոստոսի 23-ին խորհրդարանն ընդունեց «Հայաստանի անկախության մասին Հռչակագիրը», որով ազդարարվում էր Հայաստանի անկախացման գործընթացի սկիզբը²:

Այսպիսով, Հայաստանը, Ռուսաստանը և խորհրդային մյուս հանրապետությունները գնում էին դեպի ինքնիշխանություն, ինքնուրույնություն, իսկ մի քանիսն էլ՝ լիակատար անկախություն: Այս առումով հանրապետությունները կամա թե ակամա դառնում էին

¹ «Հայք», 13.V.1990:

² Տե՛ս «Советская Россия», 14.VI և 24.VI.1990:

³ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 21.VII և 25.VIII.1990:

դաշնակիցներ: Սակայն կային գործոններ, որոնք այլ կերպ էին ազդում միջհանրապետական և ազգամիջյան հարաբերությունների, մասնավորապես հայ-ռուսական հարաբերությունների վրա:

Այս շրջանում կենտրոնը դեռ բավականին ազդեցիկ ուժ էր իրենից ներկայացնում: Այն իր ձեռքի տակ առայժմ ուներ բավական տնտեսական, քաղաքական, ռազմական և այլ կարգի լծակներ՝ պատժելու կենտրոնախույս հանրապետություններին: ԽՍՀՄ-ի կենտրոնական իշխանությունները միությունը պահպանելու համար միջոցների առաջ կանգ չէին առնում: Ռբա ապացույցն է Արցախում և Հայաստանի սահմանամերձ շրջաններում խորհրդային բանակի և ներքին զորքերի ստորաբաժանումների միջոցով արդեն վաղուց իրականացվող բռնությունների և տեղահանման քաղաքականությունը հայ ազգաբնակչության նկատմամբ:

Կենտրոնի կայսերապաշտական քաղաքականությունը որոշ չափով համապատասխանում էր Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերին. վերջինս միշտ էլ ձգտել է կայսրության մեջ մտնող տարածքներն այս կամ այն կերպ պահել իր ազդեցության ոլորտում: Սակայն, այնուամենայնիվ, Ռուսաստանի նոր ղեկավարության առաջին քայլերը և ժողովրդավարության ու ազատության սկզբունքներին հավատարիմ լինելու մասին հավաստիացումները նպաստում էին կայսրության «հոգեվարքը» մեղմելուն, նրա սնխուսափելի անկումը հնարավորինս անարյուն դարձնելուն:

Այդ է վկայում ԻԽՖՍՀ Ժողպատգամավորների՝ նոր միութենական պայմանագրի սկզբունքները հաստատող 1990 թ. հունիսի 23-ի որոշումը, որը կառավարությանը պարտավորեցնում էր ձեռնամուխ լինել տնտեսական, առևտրական, մշակութային և այլ հարցերով պայմանագրերի կնքմանը բոլոր միութենական հանրապետությունների հետ իրավահավասար, կամավոր հիմունքներով՝ Իր ելույթներում Բ. Ելցինը նշում էր, որ պետք է առողջացնել ու հարստացնել միջհանրապետական կապերը և կենտրոնական իշխանությանը ազատել իրեն խորթ միջնորդական գործառնություններից:

Իր կողմից Հայաստանի խորհրդարանը մեծ շահագրգռություն հանդես բերեց ԻԽՖՍՀ-ի հետ երկկողմանի դաշնագրի կնքման հարցում և հուլիսին ստեղծեց հանձնախումբ՝ այդ հարցով զբաղվելու համար:

Իսկ կենտրոնը կարծես չէր էլ նկատում հանրապետություններում ծավալվող գործընթացները և, չնայած ԽՍՀՄ 28-րդ համագումարում՝ մարդու և ազգերի իրավունքները հարգելու վերաբերյալ երկրի ղեկավարության արած հայտարարություններին, շարունակում էր գործել հին՝ բռնապետական եղանակով: Ասվածի ապացույցն է ԽՍՀՄ նախագահի հուլիսի 25-ի հրամանագիրը ԽՍՀՄ օրենսդրությանը չնախատեսված սպառազեն կազմավորումները ցրելու մասին, որն առաջին հերթին հարվածում էր հայոց ինքնապաշտպանության ուժերին, քանի որ ադրբեջանական ապօրինի զինված կազմավորումները գործում էին Ադրբեջանի ներքին գործերի նախարարության հովանու ներքո: Իսկ հայկական ինքնապաշտպանական ջոկատները կենտրոնի կայսերապաշտական, աղըրբեջանամետ քաղաքականության և Ադրբեջանի հայակործան գործողությունների պայմաններում այն ուժն էին, որոնք հնարավորության չափով պաշտպանում էին հայերի կյանքն ու գույքը, իրավունքն ու արժանապատվությունը:

Բնականաբար Հայաստանի Գերագույն Խորհուրդը հուլիսի 31-ին կասեցրեց նախագահի հրամանագրի կիրարկումը հանրապետությունում՝ ներառյալ ԼՂ-ում՝ ստանձնելով հարցի կարգավորումը և հայտնելով սույն հարցի շուրջ ԽՍՀՄ նախագահի հետ բանակցություններ վարելու պատրաստականություն, ինչի արդյունքում Գորբաչովն իր հրամանագրի կատարման ժամկետը երկարեցրեց երկու ամսով՝:

Ձինված ինքնապաշտպանական ուժերը կենսականորեն անհրաժեշտ էին ադրբեջանախորհրդային հարձակումներին դիմադրելու համար, սակայն դրանք պետք է ընդգրկվեին հանրապետության պետական կառույցներում և գործեին համակարգված.

⁴ Տե՛ս «Советская Россия», 24.VI.1990:

⁵ Տե՛ս «Правда», 3.VII և 15.VII.1990, «Известия», 27.VII.1990:

⁶ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 10.VIII.1990 և «Известия», 13.VIII.1990:

միասնական պետական մարմնի հրամանատարության ներքո: Մինչդեռ Հայաստանում ստեղծված անիշխանության մթնոլորտում զինված ջոկատների չհամաձայնեցված գործողությունները, միմյանց միջև հաճախ դրսի ուժերի կողմից հրահրվող բախումները միայն վնասում էին հայրենիքի պաշտպանության գործին, հնարավորություն տալիս արտաքին ուժերին միջամտելու հանրապետության ներքին կյանքին և ապակայունացնելու այն, իսկ օտար լրատվամիջոցներին՝ չստուգված ու ստահող տվյալներ հաղորդելու «հայ գործադիներին» մասին:

Հայաստանում գործող սպառազեն կազմավորումները պետական հսկողության տակ դնելու և հանրապետության նոր ղեկավարությանը ստորադրելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունն 1990 թ. օգոստոսի 21-ին որոշում ընդունեց ներքին գործերի նախարարությանն առընթեր հատուկ ստորաբաժանումներ ստեղծելու մասին, իսկ Գերագույն Խորհուրդը օգոստոսի 29-ին ՀՀ ողջ տարածքում արտակարգ դրություն մտցրեց⁷:

Մինչ այդ՝ օգոստոսի 23-ին, ինչպես նշվեց, հանրապետության խորհրդարանն ընդունել էր «Հոչակագիր Հայաստանի անկախության մասին», ուր ասվում էր. «Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ: ՀՀ ամբողջ տարածքում գործում են միայն ՀՀ սահմանադրությունը և օրենքները... Հայաստանի Հանրապետությունն իր անվտանգությունը և սահմանների ամձեռնմխելիությունը ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն Խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին գործեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ... Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն, ամմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, ԽՍՀՄ ազգային-պետական կազմավորումների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը»⁸:

Դա սպառնում էր կայսրության ամբողջականությանը: Արցախյան պահանջատիրությամբ էլ վտանգվում էր Խորհրդային Միության վարչական բաժանումը, և հարցի արդարացի լուծման դեպքում կարող էր վերաձևվել ողջ ԽՍՀՄ-ի վարչական քարտեզը: Բնական է, նման իրավիճակում կենտրոնը վարելու էր աղբբեջանամետ քաղաքականություն. Աղբբեջանում իշխանության գլուխ դեռ կոմունիստներն էին, որոնք դեռևս միայն ակնարկում էին անկախության մասին:

Թե ինչպես էին կենտրոնական իշխանությունները սիրաշահում կոմունիստական Աղբբեջանին և պատժում ինքնորոշվող Հայաստանին, պարզ երևում էր Արցախում: Գնալով սաստկանում էին հայ բնակչության նկատմամբ իրականացվող պատժիչ գործողությունները, հայկական բնակավայրերի շրջափակումները: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989 թ. հունվարի 12-ի ապօրինի որոշման հետևանքով Լեռնային Ղարաբաղում չէին գործում կուսակցական և խորհրդային մարզային մարմինները, թեև միութենական խորհրդարանը ավելի ուշ՝ 1989 թ. նոյեմբերի 28-ին, որոշել էր վերականգնել դրանք գործունեությունը⁹: Այժմ էլ Աղբբեջանի ղեկավարությունը կենտրոնի աջակցությամբ անցել էր շրջանների գլխատմանը: Եվ առաջինն այդ շարքում Հաղորդում և Օսհոմյանն էին, որտեղ աղբբեջանական իշխանությունների որոշմամբ 1990 թ. ամռանը դադարեցվեց շրջանային ղեկավար մարմինների գործունեությունը, և ստեղծվեցին «հանրապետական կազմբյուրոներ»՝ Պոլյանիչկոյի գլխավորած ԼՂԻՄ-ի հարցերով Աղբբեջանի հանրապետական «կազմկոմիտեի» օրինակով¹⁰:

ՀՀ Գերագույն Խորհուրդը 1990թ. սեպտեմբերի 5-ի հայտարարության մեջ իրադրության կայունացման երաշխիք էր համարում հետևյալ քայլերը. 1) Ներքին գործերի և բանակի ստորաբաժանումների տեղաբաշխումը ԼՂԻՄ-ի, Օսհոմյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի վարչական սահմանների երկայնքով, 2) Աղբբեջանի հանրապետական

⁷ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 23.VIII.1990 և «Հայաստան», 30.VIII.1990:

⁸ «Խորհրդային Հայաստան», 25.VIII.1990:

⁹ Տե՛ս «Известия», 15.I և 30.XI.1989:

¹⁰ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 23.VI.1990 և «Հայաստան», 30.VIII.1990:

«կազմկոմիտեի» վերացումը ԼՂԻՄ-ում և մարզային ու տեղական խորհուրդների վերակազմումը ԼՂԻՄ-ում, Շահումյանի շրջանում և Գետաշենի ենթաշրջանում, 3) ԼՂԻՄ-ի, Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի ապաշրջափակումը»¹¹:

Սակայն Մոսկվան անարձագանք էր թողնում հայկական կողմի պահանջները և առաջարկությունները: Կենտրոնին չսթափեցրեց նույնիսկ սեպտեմբերի կեսերին մի խումբ հայ պատգամավորների կողմից հայտարարված հացադուլը, որի մասնակիցներն ընդամենը պահանջում էին Լեռնային Ղարաբաղում վերակազմել խորհուրդների գործունեությունը¹²:

Հարկ է նշել, որ տարածաշրջանում իրավիճակի ապակայունացման գործում մեծ դեր էին խաղում կենտրոնական լրատվամիջոցները, որոնք, հայ ժողովրդի օրինական իրավունքների պաշտպանությունը ներկայացնելով որպես ագրեսիա Ադրբեջանի նկատմամբ, ապակողմնորոշում էին խորհրդային և միջազգային հասարակական կարծիքը: Ասվածի բազմաթիվ ապացույցներից մեկն է սեպտեմբերի 10-ին Խորհրդային Միության հեռագրական գործակալության (ՏԱՍՍ) ալիքներով տարածված Ադրիմֆորմի՝ «ԼՂԻՄ. իրադրության լարում» վերնագիրը կրող կեղծ, ապակողմնորոշող հաղորդագրությունը, որը հերքվեց ոչ միայն հայկական համապատասխան մարմինների կողմից, ինչն արդեն սովորական բան էր դարձել, այլև հենց ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության մասնաճյուղի կենտրոնի կողմից¹³: Փորձում էին վարկաբեկել նույնիսկ հայ ժողովրդի անցյալը, հրապարակվում էին նյութեր, որոնք վիրավորական և զրպարտչական արտահայտություններ էին պարունակում հայության հասցեին¹⁴:

Կենտրոնի հետ հարաբերությունների սրմանը զուգահեռ զարգանում էին հորիզոնական ուղղակի կապերը Հայաստանի և միութենական հանրապետությունների, այդ թվում նաև Թուսաստանի միջև: 1990 թ. սեպտեմբերի սկզբին ՀՀ և ՌԽՖՍՀ կառավարությունների միջև ստորագրվեց համաձայնագիր տնտեսական ու մշակութային համագործակցության մասին, որը գործելու էր մինչև 1992 թ. հունվարի 1-ը¹⁵: Ու թեև այդ շրջանում Խորհրդային Միությունում տիրող ընդհանուր ճգնաժամի պայմաններում չկային մեխանիզմներ այդ և նման համաձայնագրերի ամբողջական կատարման համար, այնուամենայնիվ մասնատվող Միության սուբյեկտների միջև անմիջական ու փոխշահավետ շփումները կայունացնող գործոն էին և միտված էին քայքայման գործընթացների ծանր հետևանքները մեղմելուն:

Զնայած երկրում տիրող համընդհանուր ճգնաժամին՝ 1990 թ. երկրորդ կեսին Թուսաստանի հայկական համայնքներում նկատվում էր ազգային-մշակութային կյանքի որոշակի աշխուժացում: Բացվում էին հայկական կիրակնօրյա դպրոցներ, մշակութային ընկերություններ, անցկացվում էին Հայաստանի մշակույթի օրեր, հրատարակվում նոր պարբերականներ¹⁶: Դա դրական գործոն էր հայ-ռուսական շփումների ակտիվացման գործընթացում:

Երկու հանրապետությունների ղեկավարներն անհրաժեշտ էին համարում ուղղահայաց միջնորդավորված կապերից անցնել միջհանրապետական հորիզոնական հարաբերությունների և պատրաստակամություն էին հայտնում գործնական քայլեր կատարելու այդ ուղղությամբ:

Դրա հետ մեկտեղ՝ Լ. Տեր-Պետրոսյանը սեպտեմբերին Բ. Ելցինին հղած նամակում մտահոգություն էր հայտնում հայ-ադրբեջանական հակամարտության գոտում խորհրդային բանակի ու ներքին զորքերի ստորաբաժանումների ապօրինի ու պատժիչ գործողությունների և որպես հետևանք հայության շրջանում հակաբանակային տրամադրությունները

¹¹ «Երեկոյան Երևան», 7.IX.1990:

¹² Տե՛ս «Հայաստան», 10-20.IX.1990:

¹³ Տե՛ս «Красная Звезда», 2.VI.1990 և «Խորհրդային Հայաստան», 13.VI.1990, «Правда», 3.IX.1990 և «Հայաստան», 6.IX.1990, «Известия», 12.IX և 13.IX.1990:

¹⁴ Տե՛ս **В. М. Копылов**, Дашнаки, «Военно-исторический журнал», 1990, № 8, էջ 8-16, № 9, էջ 47-56:

¹⁵ Տե՛ս «Երեկոյան Երևան», 8.IX.1990:

¹⁶ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28.X և 24.XI.1990, «Հայաստան», 6.XI.1990:

հակառուսականի վերածվելու կապակցությամբ: Հայաստանի խորհրդարանի նախագահի կարծիքով, Ռուսաստանի նոր ժողովրդավարական ղեկավարությունը հանուն իր շահերի կարող էր ակտիվորեն միջամտել այդ խնդրին և խոչընդոտել Ռուսաստանի շահերը կենտրոնի կայանրապետական ամբիցիաներին և Ադրբեջանի իշխանությունների ազգայնական ծրագրերին ենթարկելու քաղաքականությանը¹¹:

Այդ առումով կարևոր նշանակություն ուներ և մեծ դեր կարող էր խաղալ ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի 1990թ. սեպտեմբերի 21-ի որոշումը, որն անթույլատրելի էր համարում այդ հանրապետության՝ իսկական զինձառության զորակոչված քաղաքացիներին ուղարկելը ՌԽՖՍՀ սահմաններից դուրս՝ ազգամիջյան հակամարտությունների լուծմանը մասնակցելու համար: Մոտ երեք ամիս անց՝ դեկտեմբերի 11-ին, համանման որոշում ընդունեց Ռուսաստանի ժողպատգամավորների համագումարը¹²: Սակայն այդ որոշումները, ինչպես և ուսումնասիրվող ժամանակաշրջանում ընդունված շատ օրենքներ ու որոշումներ, չգործեցին և զինված ուժերը Կրեմլի կողմից շարունակվում էին օգտագործվել կայանրապետական քաղաքականության իրականացման համար:

Այսպես կոչված «վերակառուցման» պայմաններում զինված ուժերի միջոցով քաղաքական հարցեր լուծելու եղանակները կենտրոնական իշխանությունները փորձարկում էին Արցախում՝ հետագայում կիրառելով երկրի տարբեր վայրերում:

1990 թ. աշնանը պարզ դարձավ, որ Անդրկովկասի հանրապետություններից միայն Ադրբեջանն է մնում Կոմկուսի իշխանության տակ՝ դառնալով կոմունիստական կենտրոնի հենարանը այս տարածաշրջանում, և Կրեմլի մասնակցությունը Արցախում ադրբեջանական ազրեսիային բացահայտ բնույթ ստացավ: Նման հզոր ճնշմանը դիմադրելու համար անհրաժեշտ էր, որ Հայաստանի Հանրապետությունը պետական մակարդակով սատար կանգնեցրեր արցախահայությանը: Հենց այդպիսի պետական զորակցություն էր պահանջում ՀՀ իշխանություններից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև կապուղ օդակ հանդիսացող և 1990 թ. հոկտեմբերից օրհասական վտանգի առջև կանգնած Բերդաձորի ինքնապաշտպանության խորհուրդը¹³: Այնինչ իշխանության գալուց հետո ՀՀԾ-ն հիմնական գործունեությունը ծավալել էր անկախության գործընթացի, Մոսկվայի հսկողությունից ազատվելու ուղղությամբ, ինչպես նաև «ժողովրդավարություն» էր խաղում քայքայվող տնտեսության և չհայտարարված պատերազմի պայմաններում: Մինչդեռ Արցախի խնդիրը ոչ միայն տարածքի վերամիավորման և պատմական արդարության վերականգնման հարց էր և է. այլև անկախ Հայաստանի քաղաքական ինքնահաստատման փորձաքարը: Ղարաբաղյան հարցն էր, որ համախմբեց ու ոտքի հանեց հայ ժողովրդին, արթնացրեց անկախ պետականության նրա վաղեմի երազանքը:

Կենտրոնական իշխանությունների առաջարկությունները Արցախյան խնդրի քաղաքական կարգավորման հնարավորություն չէին տալիս, դրանք միտված էին անփոփոխ պահելու կայսրության հիմքերը: Նրանց ներկայացրած միութենական պայմանագրի նախագիծը էական փոփոխություններ չէր նախատեսում ինքնավարությունների կարգավիճակում, ոտնահարում էր ազգերի ինքնորոշման իրավունքը՝ միաժամանակ կենտրոնին օժտելով հսկայական լիազորություններով¹⁴:

Իսկ կոնկրետ Արցախյան խնդրի լուծման Մոսկվայում մշակված «փոխզիջողական» տարբերակը, որն ստացել էր «Պրիմակով-Նիշանովի ծրագիր» անվանումը, ըստ էության նախատեսում էր վերադարձ մինչև 1988 թ. եղած դրությունը¹⁵: Ըիշտ է, ըստ այդ ծրագրի պետք է վերականգնվեին ԼՂԻՄ-ի իշխանության մարմինները, անցկացվեին մարզխորհրդի և տեղական խորհուրդների ընտրություններ, սակայն Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը սահմանվում էր որպես Ադրբեջանում ինքնավար կազմավորում: Մինչդեռ Արցախյան պահանջատիրությունը պայքար էր հանում այդ կարգավիճակի փոփոխության, այլ ոչ թե մարզխորհրդի, ուստի և վերոնշյալ ծրագիրն անընդունելի էր հայության համար:

¹¹ Տե՛ս «Հայաստան», 22.IX.1990:

¹² Տե՛ս «Советская Россия», 26.IX և 14.XII.1990:

¹³ Տե՛ս «Դրոշակ», 7.XI.1990:

¹⁴ Տե՛ս «Правда», 24.XI.1990:

¹⁵ Տե՛ս «Իրավունք», 30.XI.1990:

Ստեղծված պայմաններում Հայաստանից ընտրված ԽՍՀՄ ժողպատգամավորներն անհնար համարեցին իրենց մասնակցությունը IV-րդ համամիութենական համագումարի աշխատանքին, որին 1990 թ. դեկտեմբերի 2-ին համապատասխան դիմում հղեցին: Ինչպես իրավացիորեն նշվում էր դիմումի մեջ, համագումարի կամ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նստաշրջանի ամեն մի նոր որոշում մշտապես բարդացնում է ԼՂԻՄ-ի դրությունը, և դրանք հանգեցրին դրամատիկ իրավիճակի: Այնուհետև դիմումի հեղինակները փաստում էին. «Ադրբեջանի դեկավարությունը ԽՍՀՄ ՆԳՆ գորքերի օգնությամբ ակտիվորեն և հետևողականորեն փոխում է ԼՂԻՄ-ի ժողովրդագրական և սոցիալ-քաղաքական իրավիճակը: Հայ բնակչությունն արտաքսվել է Կամո և Ազատ գյուղերից, ավերվել և ոչնչացվել են 20-ից ավելի գյուղեր: Լուծարվել են բոլոր չորս հայկական վարչական շրջանները»²²: Միաժամանակ, ըստ պատգամավորների, լրատվամիջոցներով հակահայկական նպատակամետ հիստերիա էր բորբոքվում, միտումնավոր կերպով և միակողմանիորեն էր մեկնաբանվում բռնությանը հայերի միանգամայն բնական արձագանքը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ իշխանափոխությանը հակասական զարգացումներ էին ստանում: Ինքնիշխանության ձգտող երկու հանրապետությունների միջև տեղի ունեցող շփումների շնորհիվ ձևավորվում էին անմիջական երկկողմանի հարաբերություններ: Սակայն վերջիններս վրա բացասական ազդեցություն էր գործում տարածաշրջանում միութենական կենտրոնի վարած կայսերապաշտական քաղաքականությունը, որը հիմնականում իրագործվում էր ռուսների միջոցով: Բնուսաստանի նոր դեկավարությունը փորձում էր սահմանազատվել միութենական իշխանությունների վարած քաղաքականությունից, սակայն միշտ չէ որ դա հաջողվում էր: Այնուամենայնիվ, հանրապետությունների ինքնուրույնության ամրապնդումը և կենտրոնի դիրքերի թուլացումը հուշում էին, որ մոտ ապագայում հայ-ռուսական հարաբերությունները ձերբազատվելու էին երրորդ սուբյեկտի ազդեցությունից:

Լ. Լ. УЛУБАБЯН - *Армяно-российские отношения после смены власти в 1990 г.* - В результате весенних парламентских выборов 1990г. в Армении и России к власти пришли новые, оппозиционные коммунистическим партиям политические силы, взявшие курс на установление суверенитета республик. Это, наряду с перемена-ми, происходящими в СССР в целом, создавало предпосылки для налаживания между двумя республиками отношений нового уровня. Однако на двусторонние армяно-российские отношения отрицательно влияла имперская политика центральных властей, претворяемая в жизнь в основном представителями русской национальности. Это было особенно заметно в “Нагорном Карабахе и вокруг него”, где интересы центра и коммунистического Азербайджана, являвшегося своего рода маленькой империей, совпадали. В определенной мере политика союзных властей соответствовала и российским интересам: Россия всегда стремилась удержать территории, входящие в состав империи, в сфере своего влияния. Попытки нового, демократически избранного руководства России отмежеваться от реакционной политики Кремля не всегда удавались.

И несмотря на это, стремление республик к развитию непосредственных отношений между собой, заключение в сентябре 1990г. межправительственного армяно-российского соглашения об экономическом и культурном сотрудничестве, непосредственные контакты между руководителями республик, а также оживление национально-культурной жизни в армянских общинах России во второй половине 1990г. знаменовали дальнейшее расширение межреспубликанских связей и укрепление армяно-российских отношений.

²² «Երեկոյան Երևան», 7.XII.1990: